

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆ

1978 թ. հոկտեմբերի 3-ին Փարիզում վախճանվեց հայագետ-արևելագետ, „Revue des études arméniennes“ հանդեսի քարտուղար (ըստ էության՝ խմբագիր) Հայկ Պերպերյանը: Վերջին տասնամյակների հայագիտության պատմության մեջ Հ. Պերպերյանին առանձնակի և շնորհակալ տեղ էր վերապահված. նա մեծ ջանադրությամբ հետևում էր Հայաստանում և հայագիտական այլ կենտրոններում լույս տեսնող կարևոր նկատված հրատարակություններին և իր գրախոսություն-ծանուցումներով արժեքավորում էր դրանք ու մասնագետների ուշադրությանն առաջարկում: Նրա խոսքին հավատում և խորհրդին հետևում էին հայ և օտարազգի շատ հայագետներ: Նրա քաջալերանքով ու օգնությամբ արտասահմանում հայագիտությամբ էին պարապում բազում խոստումնալի երիտասարդներ:

Հայկ Պերպերյանը ծնվել է Պոլսում (Օրթագյուղ), 1887 թ. ապրիլի 17-ին, Սեբաստիայից վերաբնակված և Ղալաթիայում տպարան հիմնած Նշան Պերպերյանի բազմանդամ ընտանիքում: Թաղային դպրոցից հետո նա սովորել է Պոլսի նշանավոր Կեղրոնական ազգային վարժարանում, իրեն նախորդած Հ. Աճառյանի պես այստեղ հմտանալով գրաբարին, հայոց պատմությանն ու ֆրանսերենին: 1915 թ. անցնում է Հունաստան, իսկ ապա՝ Եգիպտոս, աշխատելով նախ իրրև թարգմանիչ, ապա՝ Ազգային պատվիրակության քարտուղար: 1920-ական թթ. հետո Հ. Պերպերյանը զբաղվում է գիտական-մշակութային գործունեությամբ: Նրա գիտական առաջին հոդվածները լույս են տեսնում Ֆ. Մակլերի և Ա. Մեյեի խմբագրած «Revue»-ում, «Ապագա» շաբաթաթերթում և այլ պարբերականներում: Ա. Պեյլերյանի վկայությամբ («Աշխարհ», 1978 թ., 21, 28 հոկտ.) երկրորդ աշխարհամարտի տարիներին Հ. Պերպերյանը «միջոց մըն ալ վարեց Փարիզի Ս. Հովհ.-Մկրտիչ եկեղեցու քարտուղարությունը», հայության վկայականով օժտելով «տարիներով հայությունն հեռացած» մերազգիներին, ինչպես նաև՝ հրեաների, փրկելով նրանց վերահաս սպառնալիքից:

Հ. Պերպերյանի գիտական շարադրանքին բնորոշ է շափավորությունն ու զգուշությունը, կարճառոտությունն ու փաստացիությունը: «Նյութեր Կ. Պոլսո հայոց պատմության համար» (Վիեննա, 1965 թ.) գիրքը միտում է ուրվագծել պոլսահայության պատմությունը քաղաքի գրավումից սկսած, ճշտելով հոգևոր կենտրոնների դերն ու երևելի գործիչների ժամանակագրությունը: Դրվատելի է սկզբնաղբյուրների

սպառիչ իմացությունն ու քննության մանրակրկիտությունը: Հենց այս մանրակրկիտության թելադրանքով էր, որ Հ. Պերպերյանը ձեռնարկեց և զուգույն բերեց Վարդանի՝ «Աշխարհացոյցի» գիտական հրատարակությունը՝



«համեմատությամբ 24 ձեռագրի և տպագրի» (Փարիզ, 1960 թ.): Դա հիրավի դյուրին գործ չէր. ժամանակի ընթացքում ձեռագրերը ընդմիջարկվել ու խմբագրվել են, ուստի մեծ փորձ ու հմտություն պետք էր ունենալ հինն ու նորը իրարից զանազանելու, տեղանունների ճիշտ ձևը վերականգնելու, առկա խմբագրությունները բաղդատելու, հեղինակային պատկանելությունը հավաստելու, Վարդանի «Պատմության» հետ հարաբերելու համար: Եվ, կարելի է ասել, Հ. Պերպերյանն այդ կատարել է ընդգծված հաջողությամբ:

Բնագրագիտական աշխատանքի մատնացուցելի օրինակ է Հ. Պերպերյանի «Հայկականք» հոդվածաշարը («Հանդես ամսօրյա», 1958, 1960, 1962, 1968 թթ.), ուր բացահայտված ու մեկնաբանված են մասնավորապես Կորյունի երկի բնագրական մի շարք խաթարված ու մութ արտահայտություններ: Նրան ենք պարտական նաև՝ զոդ, ծեծ, հաց և հացել ու այլ բառերի այսօրվա ոչ սովորական իմաստները ճշտելու համար: Արևելյան լեզուների իմացությունից բացի սուր միտք էր անհրաժեշտ Տօլի տեղանունը տեղորոշելիս և նրա Արիշ (էլ-Արիշ) արաբական համապատասխանությունը ճշտելիս: Ի դեպ, Հ. Պերպերյանին է պատկանում նիկե-

Վորի ծովից մականունը ծանր(ա)վիզ ընթերցելու առաջարկը («Byzantion», t. VIII, 1933):

Հ. Պերպերյանին զրազեցրած հայ-բյուզանդական խնդիրներից առանձնապես կարևոր է XI դարը: «Նիկեիոսի Փոկասի ապստամբությունը և Գավիթ Արծրունի» («Հանդես ամսօրյա», 1967), «Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը XI դարուն երկրորդ կեսին» («Հանդես ամսօրյա», 1967) աշխատությունները նորովի են լուսարանում պատմության այդ զրվագը: Գիտնականի նետաքրքրությունների արտահայտություններից մեկն էլ կաստիվերցու երկի ֆրանսերեն թարգմանությունն ու ծանոթագրումն էր, որ նա կատարեց Մ. Կանարի հետ համատեղ (Bruxelles, 1973 թ.): Կարևոր են նաև սելջուկյան կայսրության մեջ XIII դարում տեղի ունեցած Բարսիների ապստամբության և Թուրքիայում՝ Ջալալիների շարժման հանգամանքներին նվիրված ուսումնասիրությունները: Հայկական և օտար աղբյուրների հիմնավոր իմացությունը հեղինակին հնարավորություն են տալիս վստահ եզրակացությունների հանգել:

Հայկ Պերպերյանը միաժամանակ թուրքագիտական պատրաստություն ունեցող հայագետ էր. բանագիտության մեջ եղակի է նրա «Արշակ Բ և Քեօրոզլու» հետազոտությունը («Ապագա», 1939 թ.). ժ. Դյումեզիլի օրինակով նա ջանաց բացահայտել հիշյալ էպոսի հայկական ու համակովկասյան ենթաշերտը՝ «կույր զավակի» վիպական հենքը պրպտելով Փավստոս Բուղանդի երկում («Արշակ որդի Տիրանայ»): Տիպարանական ընդհանրությունները Հ. Պերպերյանի գրչի տակ պատմական-մշակութային բացատրություն ստացան: Նույնքան կարևոր ու հեռանկարային է օսմանյան վավերագրերում հայերին վերաբերող տեղեկություններ որոնելը: Հ. Պերպերյանի «Օսմանյան քանի մը վավերագիր Իսթանպուլի հայոց եկեղեցիներն ու մանց մասին» աշխատանքը («Հանդես ամսօրյա», 1961) այդ բնույթի հետազոտության անդրանիկ նմուշ է: Խնդրի կարևորությունը ակներև դարձավ հեղինակի մեկ այլ աշխատությամբ ևս՝ նվիրված Yakub Mughue-ի ուսումնասիրության

ըննությանը (Paris, 1969 թ.): Ի վերջո, հայագիտական-թուրքագիտական պատրաստության զրսևորումներից է «Հայ-թուրքական գրականություն» աշխատությունը (Philologiae Turcicae Fundamenta. II, 1967), որը ընդարձակ տեղեկություններ են տրվում թուրքալեզու հայ գրականության և հայատառ թուրքերեն երկերի ու մամուլի մասին:

Հ. Պերպերյանը, աշխատանքի բերումով, շատ առիթներ ուներ հայ և օտարազգի գիտնականների հետ հարաբերություններ պահպանելու: Հիշյալ պարագան արդյունավետ է եղել երկու առումով. նա պրպտում և հրատարակության էր առաջարկում նախորդ սերնդի հայագետների անտիպ աշխատությունները (Ա. Մեյե, Ն. Բյուղանդացի և այլք) և կամ՝ թարգմանաբար հրատարակում էր կարևոր նկատած աշխատությունները: Մասնավորապես նրա թարգմանությամբ են տպագրվել David Magie-ի, P. Charanis-ի և ուրիշների գործերը: Հայ գիտնականների տասնյակ աշխատություններ ֆրանսերեն են թարգմանվել Հ. Պերպերյանի ձեռքով կամ նրա հոգածությամբ:

Հ. Պերպերյանը սրտացավ, պահանջկոտ ու ճշտապահ անձնավորություն էր: «Revue»-ի 12 ծավալուն հատորները վկայում են, որ նա ուշադրությամբ հետևում էր մայր հայրենիքի գիտական հրատարակություններին, որոնցից յավագույնները նա միշտ գնահատել ու գրախոսել է: Ը գնահատություն երիցագույն գիտնականի վաստակի՝ ամիսներ առաջ որոշվել էր նրա 90-ամյակին ձոնել «Revue»-ի 13-րդ հատորը: Մինչ մենք պատրաստվում էինք պատվել նրան՝ ուղարկվող հետազոտություններով, սփյուռքահայ մամուլը գուժեց երախտավորի մահը:

Հուսանք, թե Հ. Պերպերյանի մտերմությունը վայելող բանասերները ի մի կժողովեն հանգուցյալի աշխատությունները և կհրատարակեն առանձին հատորով: Հ. Պերպերյանի վաստակը լիովին արժանի է նման հոգացողության:

Պ. Մ. ՄՈՒՐԱԳՅԱՆ